ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Հավատարմագրման ազգային մարմին»

ՊՈԱԿ-ի տնօրեն

_____ Ա. Օբոսյան
(անուն, ազգանուն)

« 30 » **հունիսի** 2023 թ.

N__6-ԿՀ__ հրաման

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ

Հավելված PR-7/ACB-02

ՄՇԱԿԵԼ Է

Կառավարման համակարգի մենեջեր

Ն. Աբգարյան_____
(անվանատառ, ազգանուն, ստորագրություն)

ՍՏՈՒԳԵԼ Է

Հավատարմագրման բաժնի պետ

Ն. Համբարձումյան_____
(անվանատառ, ազգանուն, ստորագրություն)

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԵԼ Է

Արտադրանքի, կառավարման համակարգերի, անձանց սերտիֆիկացման մարմինների խորհրդատվական տեխնիկական կոմիտեի հետ

Գործարկման թվականը__04.07.2023թ.

Երևան 2023

Բովանդակություն

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ.....3

2. ՆՈՐՄԱՏԻՎ ՎԿԱՅԱԿՈՉՈՒՄՆԵՐԸ 3

3. ՏԵՐՄԻՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԸ 3

4. ՍՄ-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ 4

4.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՅՏԸ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ 5

4.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ 5

4.3.1 ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ 5

4.3.2 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ 5

4.3.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ 14

4.4 ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ 15

4.4.1 ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ 15

4.4.1.5 ԱՐՏԱՀԵՐԹ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԸ 17

4.4.1.6 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԿԱՅԱՑՈՒՄԸ 17

4.4.1.7 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ/ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՆՈՐ ՍՏԱՆԴԱՐՏԻՆ ԱՆՑՈՒՄԸ 17

4.5 ՎԵՐԱՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ (ՀԵՏԱԳԱ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՈՒՄԸ) 18

4.6 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ, ԱՐԴԻԱԿԱՆՑՈՒՄԸ, ԿՐՃԱՏՈՒՄԸ, ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ 18

4.6.1 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ 18

4.6.2 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ 19

4.6.3 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ԿՐՃԱՏՈՒՄԸ 19

4.7 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ, ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 20

4.8 ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ 21

4.9 ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳԱՆԳԱՏՆԵՐԸ 22

5. ՍՄ-Ի և ԱՐՄՆԱԲ-Ի ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 22

6. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԸ ..... ERROR! BOOKMARK NOT DEFINED.

ՀԱՎԵԼՎԱԾ Ա - ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԵՐՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՁԵՎԸ ..... ERROR! BOOKMARK NOT DEFINED.

ՀԱՎԵԼՎԱԾ Բ - ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐՎԱԾ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՍԵՐՏԻՖԻԿԱՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԿՀ ՍՄ) ERROR! BOOKMARK NOT DEFINED.

ՀԱՎԵԼՎԱԾ Գ - ՓՈՓՈԽՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԱՉԱՓ. ERROR! BOOKMARK NOT DEFINED.

*1. **Կիրառման ոլորտը***

Սույն փաստաթուղթը սահմանում է «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ ԱՐՄՆԱԲ) կողմից իրականացվող կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինների (այսուհետ՝ ՍՄ) հավատարմագրման, պարբերական/արտահերթ գնահատման, հավատարմագրման ընդլայնման, կրճատման, վերականգնման, կասեցման, դադարեցման, արդիականացման, վերահավատարմագրման ընթացակարգը և կանոնները:

Սույն փաստաթուղթը հանդիսանում է PR-7 հիմնական փաստաթղթի հավելված, որը ներառում է տվյալ տեսակի համապատասխանության գնահատման մարմնի հավատարմագրման այն պահանջներն ու ընթացակարգը, որոնք սահմանված չեն PR-7-ով:

*2. **Նորմատիվ վկայակոչումները***

Առանց տարեթվի վկայակոչված փաստաթղթերը կիրառելի են միայն վերջին հրատարակությամբ: Սույն փաստաթղթում վկայակոչված փաստաթղթերը ներկայացված են ԱՐՄՆԱԲ-ի կողմից մշակված «AC-4.6 Հավատարմագրման ընդհանուր չափանիշները և փաստաթղթերի ցանկը» փաստաթղթում:

EA-ի և IAF-ի փաստաթղթերը տեղադրված են հետևյալ կայքերում՝

EA: http://www.european-accreditation.org, IAF: http://www.iaf.nu:

*3. **Տերմինները, սահմանումները և հապավումները***

3.1 Սույն ընթացակարգում կիրառված են «Հավատարմագրման մասին» ՀՀ օրենքով, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17000, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17011 ստանդարտներով սահմանված և հետևյալ տերմիններն ու սահմանումները՝

համապատասխանության հավաստում՝ որոշման հիման վրա հավաստվում է սահմանված պահանջների կատարումը.

սերտիֆիկացման աուդիտ՝ պատվիրատուից կամ հայտատուից անկախ աուդիտային կազմակերպության կողմից իրականացված աուդիտ՝ պատվիրատուի կառավարման համակարգը սերտիֆիկացնելու նպատակով.

սերտիֆիկացման սխեմա՝ համապատասխանության գնահատման համակարգ, որը վերաբերում է կառավարման համակարգերին, որոնց նկատմամբ կիրառվում են նույն սահմանված պահանջները, հատուկ կանոնները և ընթացակարգերը.

աուդիտի ժամանակ՝ ժամանակ, որն անհրաժեշտ է պլանավորելու և իրականացնելու պատվիրատու կազմակերպության կառավարման համակարգի մեկ ամբողջական և արդյունավետ աուդիտ:

3.2 Հապավումները

- ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն,
- ԱՐՄՆԱԲ՝ «Հավատարմագրման ազգային մարմին» ՊՈԱԿ,
- ՀԳՄ՝ համապատասխանության գնահատման մարմին,
- ՀԿ՝ հավատարմագրման կոմիտե,
- ՍՄ՝ սերտիֆիկացման մարմին,
- EA՝ Հավատարմագրման Եվրոպական համագործակցություն,
- IAF՝ Հավատարմագրման միջազգային ֆորում,
- ԱԱԱԱ՝ Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր:

4. ՍՄ-ին ներկայացվող պահանջները

4.1 Հավատարմագրման պահանջները սահմանված են PR-7 ընթացակարգում, ինչպես նաև ստորև.՝

1) սերտիֆիկացման մարմնի կայքէջի առկայություն, որտեղ տեղադրված է սերտիֆիկացման մարմնի գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ համաձայն կառավարման համակարգի, ինչպես նաև ՀՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17021-1 ստանդարտի 8.1 կետով սահմանված պահանջների,

2) հավատարմագրման ոլորտով սահմանված բոլոր ուղղություններով աշխատողներ (աուդիտորներ, փորձագետներ), ովքեր ունեն ԻՍՕ/ԻԷԿ 17021-1-7 ստանդարտներով, EA, IAF փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան գիտելիքներ ու աշխատանքային փորձ և ունեն աուդիտորի/փորձագետի որակավորման վկայական՝ տրամադրված ԻՍՕ/ԻԷԿ 17024 ստանդարտին համապատասխան հավատարմագրված անձանց սերտիֆիկացման մարմնի կամ համապատասխան ոլորտի լիազոր մարմնի կողմից:

4.2 **Հավատարմագրման հայտը և կից փաստաթղթերը**

ՍՄ-ն ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում լրացված հայտը և դրան կից փաստաթղթերը՝ համաձայն ACB-01-02-01 - ACB-01-02-06 հավելվածների, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի պաշտոնական կայքում՝ www.armnab.am:

Հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի ընդունման, լրակազմի ստուգման, ռեսուրսների վերլուծության և հայտի գրանցման ընթացակարգը սահմանված է PR-7-ում, որը տեղադրված է www.armnab.am կայքում:

4.3 ***Հավատարմագրման գործընթացը***

*4.**3.1 Փաստաթղթերի փորձաքննությունը***

4.3.1.1 ՍՄ-ի կողմից համապատասխան վճարումը կատարելուց և գնահատման խումբը հաստատվելուց հետո սկսվում է հավատարմագրման հայտի և կից փաստաթղթերի փորձաքննությունը՝ համաձայն PR-7-ի:

*4.3.2 **Տեղում գնահատումը***

4.3.2.1 Գնահատման նպատակն է հավաստել, որ ՍՄ-ի սերտիֆիկացման ծրագիրը և ընթացակարգերը պատշաճ կերպով են իրականացվում (հատկապես աուդիտորների խմբի նշանակման և աուդիտի համապատասխան տևողության հետ կապված) և համապատասխանության գնահատման աշխատանքներն իրականացվում են սույն ընթացակարգին և այլ կիրառելի ընդհանուր ու ոլորտային նորմատիվ, ստանդարտացման փաստաթղթերին, ՍՄ-ի կառավարման համակարգի փաստաթղթերին (որակի ձեռնարկ, սերտիֆիկացման փաստաթղթեր,

ընթացակարգեր, հրահանգներ, անձնակազմի որակավորում և այլն), ինչպես նաև սերտիֆիկացման կարգին համապատասխան:

4.3.2.2 Տեղում գնահատման ժամանակահատվածը (օր/մարդ) որոշվում է համաձայն սխեմայի առանձնահատկությունների, ինչպիսիք են սերտիֆիկացման սխեմաների քանակն ու բարդությունը, գնահատման ենթակա վայրերի քանակը, սերտիֆիկացման ոլորտը և այլ գործոններ, օրինակ՝ փաստաթղթերի փորձաքննության ժամանակ հայտնաբերված անհամապատասխանությունների քանակը, ՀԳՄ-ի գործունեության վայրի հեռավորությունը և այլն:

4.3.2.3 Կիրառվում են գնահատման հետևյալ տեխնիկաները՝

- **տեղում գնահատում՝** ՍՄ-ի գլխավոր գրասենյակում և ցանկացած գործող միավորներում կամ մասնաճյուղերում, որտեղ իրականացվում է համապատասխանության գնահատման գործունեությունը: Տեղում գնահատման ընթացքում գնահատվում է կառավարման համակարգը և սերտիֆիկացման գործընթացը: Տեղում գնահատման արդյունքում կազմվում է հաշվետվություն՝ համաձայն ACB-01-02-R և ACB-01-02-AR հավելվածների,

- **հեռավար գնահատում՝** ՍՄ-ի գնահատում ըստ գործունեության իրականացման կամ վիրտուալ վայրի՝ էլեկտրոնային կապի միջոցների կիրառմամբ:

Հեռավար գնատումն իրականացվում է բացառիկ դեպքերում, օրինակ՝ անհաղթահարելի ուժի ազդեցությունների (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ), համաճարակային հիվանդությունների, գնահատողի/տեխնիկական փորձագետի տեղում մասնակցության անհնարինության և այլ հիմնավորված դեպքերում,

- **գրառումների (գործի) վերլուծություն՝** գրառումների (գործի) վերլուծություն՝ ՀԳՄ-ի հաշվետվությունների և համապատասխան փաստաթղթերի (թղթային և/կամ ֆայլային) ստուգում:

Գրառումների (գործի) վերլուծությունը ընտրված ներկայացուցչական նմուշի (սերտիֆիկացման) գնահատումն է բոլոր տեսանկյուններից:

- **փաստաթղթերի վերլուծություն՝** ՀԳՄ-ի փաստաթղթերի ստուգում:

Փաստաթղթերի վերլուծությունը կիրառվում է ՀԳՄ-ի կառավարման համակարգի տարրերի գործառնության արդյունավետությունը գնահատելու համար,

- **հարցազրույցների վարում՝** ՍՄ-ի աշխատակիցների հետ հարցազրույց,

- **գործունեության հետևում (witnessing)՝** հավատարմագրման մարմնի կողմից հավատարմագրման ոլորտի սահմաններում ՍՄ-ի համապատասխանության գնահատման գործունեության հետևում հայտատուների գործունեության իրականացման վայրերում:

ՀԳՄ-ի գործունեությունը հետևելու քանակը կախված է գնահատման ենթակա տեխնիկական կլաստերի/կատեգորիաների/տեխնիկական ոլորտների կարևոր հատվածների քանակից: Եթե հայտը վերաբերվում է վտանգավոր ոլորտներին (կրիտիկական ծածկագրերին), ապա ՀԱՄ-ը գործունեությանը հետևումն (witnessing) իրականացնում է յուրաքանչյուր ոլորտի համար՝ համաձայն IAF MD 17 փաստաթղթի, որի արդյունքում կազմվում է հաշվետվություն՝ համաձայն ACB-01-MWR հավելվածի և կցվում վերջնական հաշվետվությանը:

ՀԳՄ-ի գործունեության հետևումը կարելի է իրականացնել տեղում գնահատման ժամանակահատվածից առանձին՝ համաձայն ՀԳՄ-ի կողմից ներկայացված գրության (ծրագրի):

Գործունեությանը հետևումը գնահատման/պարբերական գնահատման ընթացակարգերի բաղադրիչ մասն է: Գործունեության հետևման հետ կապված գործողություններն անհրաժեշտ է համաձայնեցնել ՍՄ-ի հետ, այնուհետև ներառել գնահատման պլանում/ծրագրում: Գնահատման պլանն/ծրագիրն ընդգրկում է գնահատման ենթակա գործողությունները, գործունեության իրականացման վայր(եր)ը, գնահատման ենթակա անձնակազմը (անհրաժեշտության դեպքում) և գնահատման տեխնիկաները՝ ներառյալ գործունեության հետևումը: Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՍՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից սերտիֆիկացման հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՍՄ-ն հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու

համար, սակայն ոչ ուշ քան մեկ տարվա ընթացքում (մինչև հաջորդ պարբերական գնահատումը) պետք է գնահատվեն յուրաքանչյուր կամ հարակից ուղղությամբ առնվազն մեկ ներկայացուցչական նմուշ (տես 4.4.1.3 կետը)՝ համաձայն հավատարմագրման ոլորտի: Հավատարմագրման ցիկլի ընթացքում ՍՄ-ի գործունեությանը և անձնակազմին հետևելու քանակը սահմանվում է այնպես, որ գնահատվի հավատարմագրման/հավատարմագրման ընդլայնման ամբողջ ոլորտը:

Բոլոր IAF ծածկագրերը (IAF ID1) միավորվել են մի շարք տեխնիկական խմբերի (հաշվի առնելով կիրառվող նորմատիվ փաստաթղթերը, գործընթացների տեխնիկական բնութագրերը և ՍՄ-ների աուդիտի խմբի համար անհրաժեշտ շարունակական իրազեկությունը)՝ յուրաքանչյուր տեսակի կառավարման համակարգի սերտիֆիկացման համար (տե՛ս ՈԿՀ-ի համար 1-ին աղյուսակը, ԷԿՀ-ի համար՝ 2-րդ աղյուսակը, ԱԱԱԱ-ի համար՝ 3-րդ աղյուսակը):

Հավատարմագրման և հավատարմագրման ոլորտի ընդլայնման ժամանակ կիրառվում են գործունեությանը հետևելու հետևյալ կանոնները՝

1) եթե տեխնիկական խումբը ունի միայն 1 կրիտիկական ծածկագիր, ապա ՍՄ-ի գործունեության հետևումը պետք է իրականացնել այդ կրիտիկական ծածկագրով և հավատարմագրել այդ խմբի բոլոր IAF ծածկագրերի համար, օրինակ՝ Սննդամթերքի խմբի ՈԿՀ-ի համար IAF-ի 03 ծածկագրի գործունեության հետևման արդյունքում ՀԱՄ-ը հավատարմագրում է նաև այդ խմբի IAF-ի 01-ից մինչև 30 ծածկագրերի համար, Մեխանիկայի խմբի ԷԿՀ-ի համար IAF-ի 17 ծածկագրի գործունեության հետևման արդյունքում հավատարմագրում է նաև այդ խմբի IAF-ի 18-ից մինչև 22 ծածկագրերի համար:

2) եթե տեխնիկական խմբում ընդգրկված են 1-ից ավելի կրիտիկական ծածկագրեր, ապա պետք է իրականացվի առնվազն հետևյալ գործունեությանը հետևումը՝

- ՈԿՀ-ի համար այս կրիտիկական ծածկագրերից մեկը, օրինակ՝ ՈԿՀ-ի Մեխանիկայի խմբի համար IAF-ի 20 կամ 22 ծածկագրի 1 գործունեության հետևման

արդյունքում ՀԱՄ-ը հավատարմագրում է նաև այդ տեխնիկական խմբի IAF-ի այլ ծածկագրերի համար (17, 18, 19, 20 կամ 22),

- ԷԿՀ-ի համար բոլոր կրիտիկական ծածկագրերը, որոնք նշված են «և» («Կրիտիկական ծածկագիրը» սյունակի ձախ կողմում) կամ ԷԿՀ-ի համար 1 կրիտիկական ծածկագիրը, որը նշված է «կամ» («Կրիտիկական ծածկագիրը» սյունակի աջ կողմում), օրինակ՝ ԷԿՀ-ի Ապրանքների արտադրություն խմբի համար IAF-ի 04 կամ 05 ծածկագրի 1 գործունեության հետևման արդյունքում ՀԱՄ-ը հավատարմագրում է նաև այդ տեխնիկական խմբի IAF-ի բոլոր ոչ կրիտիկական ծածկագրերի համար (06 և 23),

- ԱԱԱԱ-ի համար բոլոր կրիտիկական ծածկագրերը, որոնք նշված են «և» («Կրիտիկական ծածկագիրը» սյունակի ձախ կողմում), օրինակ՝ կրիտիկական ծածկագիրը, որը նշված է […] քառակուսի փակագծում կամ նշված է «կամ»-ով: Օրինակ՝ ԱԱԱԱ-ի «Քիմիական նյութեր» խմբի համար, IAF-ի 7 կամ 10 կամ 12 կամ 13 կամ 16 ծածկագրի 1 գործունեության հետևման արդյունքում ՀԱՄ-ը հավատարմագրում է նաև այդ տեխնիկական խմբի IAF-ի բոլոր ոչ կրիտիկական ծածկագրերի համար՝ 14 և 15, գումարած այդ խմբի 17-ը, բայց մյուս կրիտիկական ծածկագրերի համար անհրաժեշտ է գործունեության հետևում իրականացնել՝ 7 կամ 10 կամ 12 կամ 13 կամ 16:

Փոխարենը, վերոհիշյալ նույն խմբի համար IAF 17 ծածկագրի 1 գործունեության հետևման արդյունքում ՀԱՄ-ը հավատարմագրում է 17 և բոլոր մյուս IAF ծածկագրերը՝ 7, 10, 12, 13, 14, 15 և 16:

Եթե ՍՄ-ն չունի կրիտիկական ծածկագրով սերտիֆիկացվող պատվիրատու, ապա ՀԱՄ-ը հավատարմագրում է ոչ կրիտիկական այն ծածկագրի համար, որի գործունեությունը հետևել է և տարածվում է այդ խմբի մյուս ոչ կրիտիկական ծածկագրերի վրա (օրինակ՝ ՈԿՀ-ի, ԷԿՀ-ի, ԱԱԱԱ-ի Սննդամթերքի խմբի համար, IAF-ի 30 ծածկագրի հետևման արդյունքում ՍՄ-ն կհավատարմագրվի IAF-ի 30 և 01 ծածկագրերի համար):

Հավատարմագրման ցիկլի ընթացքում ՀԱՄ-ն իրականացնում է յուրաքանչյուր տեխնիկական խմբի առնվազն մեկ գործունեության հետևում՝ հավատարմագրման ենթակա IAF-ի բոլոր ծածկագրերի ընդգրկումը ապահովելու համար լրացնելով (ավելացնելով) այն այլ միջոցառումներով:

Եթե ՍՄ իրականացնում է սերտիֆիկացման գործունեություն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, ապա ՀԱՄ-ը հաշվի է առնում PL-09 փաստաթղթով սահմանված կանոններն ու պահանջները:

Աղյուսակ 1 - **Որակի կառավարման համակարգեր** (**ԻՍՕ** 9001)

Տեխնիկական խումբ	IAF **ծածկ**.	**Տնտեսական հատվածի/գործունեության նկարագիրը՝ ըստ** IAF ID1-**ի**	**Կրիտիկա-կան ծածկ**.
Սննդամթերք	1	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	3
	3	Սննդամթերք, խմիչք և ծխախոտ	
	30	Հյուրանոցներ և ռեստորաններ	
Մեխանիկա	17	Հիմնական մետաղներ և պատրաստի մետաղե արտադրատեսակներ	22 կամ 20
	18	Մեքենաներ և սարքավորանք	
	19	Էլեկտրոնային և օպտիկական սարքավորանք	
	20	Նավաշինություն (ջրային տրանսպորտ)	
	22	Այլ տրանսպորտային սարքավորանք	
Թուղթ	7	Թղթե արտադրատեսակներ	9
	8	Պոլիգրաֆիական կազմակերպություն	
	9	Տպագրական կազմակերպություն	
Հանքանյութեր	2	Հանքարդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2 կամ 15
	15	Ոչ մետաղական հանքային արտադրատեսակներ	
	16	Բետոն, ցեմենտ, կիր, գիպս և այլն	
Շինարարություն	28	Շինարարություն	28
	34	Ճարտարագիտական ծառայություններ	
Ապրանքների արտադրություն	4	Մանածագործական արտադրատեսակներ և հագուստ	5 կամ 14
	5	Կաշի և կաշվե արտադրատեսակներ	
	6	Փայտանյութ և փայտե արտադրատեսակներ	
	14	Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակներ	
	23	Ուրիշ խմբավորումներում չներառված արտադրություն	
	7	Թաղանթանյութ և թղթե արտադրատեսակներ	12

Քիմիական նյութեր	10	Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն	
	12	Քիմիական նյութեր, քիմիական արտադրատեսակներ և մանրաթելեր	
Մատակարարում	25	Էլեկտրամատակարարում	26
	26	Գազամատակարարում	
	27	Ջրամատակարարում	
Փոխադրումներ և թափոնների կառավարում	24	Վերամշակում	24
	31	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	
	39	Այլ սոցիալական սպասարկում	
Ծառայություններ	29	Մեծածախ և մանրածախ առևտուր՝ ավտոմեքենաների, մոտոցիկլների նորոգում և տնային տնտեսության ապրանք	37 կամ 33
	32	Ֆինանսական միջնորդություն, անշարժ գույք, վարձակալություն	
	33	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	
	35	Այլ ծառայություններ	
	36	Պետական կառավարում	
	37	Կրթություն	
Միջուկային	11	Միջուկային վառելիք	11
Դեղագործական արտադրանք	13	Դեղագործական արտադրանք	13
Օդանավեր (օդատիեզերք)	21	Օդանավեր (օդատիեզերք)	21
Առողջապահություն	38	Առողջապահություն, սոցիալական սպասարկում	38

Աղյուսակ 2 - **էկոլոգիական կառավարման համակարգեր** (**ԻՍՕ** 14001)

Տեխնիկական խումբ	IAF **ծածկ**.	**Տնտեսական հատվածի/գործունեության նկարագիրը՝ ըստ** IAF ID1-**ի**	**Կրիտիկա-կան ծածկ**.
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1
Սննդամթերք	3	Սննդամթերք, խմիչք և ծխախոտ	3
	30	Հյուրանոցներ և ռեստորաններ	
Մեխանիկա	17	Հիմնական մետաղներ և պատրաստի մետաղե արտադրատեսակներ	20 կամ 21
	18	Մեքենաներ և սարքավորանք	
	19	Էլեկտրոնային և օպտիկական սարքավորանք	
	20	Նավաշինություն (ջրային տրանսպորտ)	
	21	Օդանավեր (օդատիեզերք)	

	22	Այլ տրանսպորտային սարքավորանք	
Թուղթ	7	Թղթե արտադրատեսակներ	9
	8	Պոլիգրաֆիական կազմակերպություն	
	9	Տպագրական կազմակերպություն	
Շինարարություն	28	Շինարարություն	28
	34	Ճարտարագիտական ծառայություններ	
Ապրանքների արտադրություն	4	Մանածագործական արտադրատեսակներ և հագուստ	4 և 5
	5	Կաշի և կաշվե արտադրատեսակներ	
	6	Փայտանյութ և փայտե արտադրատեսակներ	
	23	Ուրիշ խմբավորումներում չներառված արտադրություն	
Քիմիական նյութեր	7	Թաղանթանյութ և թղթե արտադրատեսակներ	7 և 10 և 12 և 13
	10	Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն	
	12	Քիմիական նյութեր, քիմիական արտադրատեսակներ և մանրաթելեր	
	13	Դեղագործական արտադրանք	
	14	Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակներ	
	15	Ոչ մետաղական հանքային արտադրատեսակներ	
	16	Բետոն, ցեմենտ, կիր, գիպս և այլն	
	17	Հիմնական մետաղներից արտադրատեսակներ	
Հանքանյութեր	2	Հանքարդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2
Մատակարարում	25	Էլեկտրամատակարարում	25 կամ 26
	26	Գազամատակարարում	
	27	Ջրամատակարարում	
Փոխադրումներ և թափոնների կառավարում	31	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	24 և 39 (սահմանափակվում է Nace 37, 38.1, 38.2, 39)
	24	Վերամշակում	
	39	Այլ սոցիալական սպասարկում	
Ծառայություններ	29	Մեծածախ և մանրածախ առևտուր՝ ավտոմեքենաների, մոտոցիկլների նորոգում և տնային տնտեսության ապրանք	29 կամ 35 կամ 36
	32	Ֆինանսական միջնորդություն, անշարժ գույք, վարձակալություն	
	33	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	
	35	Այլ ծառայություններ	
	36	Պետական կառավարում	
	37	Կրթություն	

Միջուկային	11	Միջուկային վառելիք	11
Առողջապահություն	38	Առողջապահություն, սոցիալական սպասարկում	38

Աղյուսակ 3 - **Աշխատողի առողջության և աշխատանքի անվտանգության կառավարման համակարգեր** (**ԻՍՕ** 45001)

Տեխնիկական խումբ	IAF **ծածկ**.	**Տնտեսական հատվածի/գործունեության նկարագիրը՝ ըստ** IAF ID1-**ի**	**Կրիտիկական ծածկ**.
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1	Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն	1
Սննդամթերք	3	Սննդամթերք, խմիչք և ծխախոտ	3
	30	Հյուրանոցներ և ռեստորաններ	
Մեխանիկա	17	Սահմանափակվում է «Պատրաստի մետաղե արտադրատեսակներ»	20 և 21
	18	Մեքենաներ և սարքավորանք	
	19	Էլեկտրոնային և օպտիկական սարքավորանք	
	20	Նավաշինություն (ջրային տրանսպորտ)	
	21	Օդանավեր (օդատիեզերք)	
	22	Այլ տրանսպորտային սարքավորանք	
Թուղթ	7	Սահմանափակվում է «Թղթե արտադրատեսակներ»	9
	8	Պոլիգրաֆիական գործունեություն	
	9	Տպագրական գործունեություն	
Շինարարություն	28	Շինարարություն	28
	34	Ճարտարագիտական ծառայություններ	
Ապրանքների արտադրություն	4	Մանածագործական արտադրատեսակներ և հագուստ	[4 և 5] կամ 6
	5	Կաշի և կաշվե արտադրատեսակներ	
	6	Փայտանյութ և փայտե արտադրատեսակներ	
	23	Ուրիշ խմբավորումներում չներառված արտադրություն	
Քիմիական նյութեր	7	Թաղանթանյութ և թղթե արտադրություն	[7 և 10 և 12 և 13 և 16] կամ 17
	10	Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն	
	12	Քիմիական նյութեր, քիմիական արտադրատեսակներ և մանրաթելեր	
	13	Դեղագործական արտադրանք	
	14	Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակ-ներ	

	15	Ոչ մետաղական հանքային արտադրատեսակներ	
	16	Բետոն, ցեմենտ, կիր, գիպս և այլն	
	17	Սահմանափակվում է «Ոչ թանկարժեք մետաղների արտադրություն»	
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	2	Հանքարդյունաբերություն և բաց հանքերի շահագործում	2
Մատակարարում	25	Էլեկտրամատակարարում	25 կամ 26
	26	Գազամատակարարում	
	27	Ջրամատակարարում	
Փոխադրումներ և թափոնների կառավարում	24	Վերամշակում	[31 (սահմանա-փակվում է վտանգավոր արտադրանքը) և 24] կամ 39 (սահմանափակվում է Nace 37, 38.1, 38.2, 39)
	31	Փոխադրումներ և պահեստային տնտեսություն	
	39	Այլ սոցիալական սպասարկում	
Ծառայություններ	29	Մեծածախ և մանրածախ առևտուր՝ ավտոմեքենաների, մոտոցիկլների նորոգում և տնային տնտեսության ապրանք	29 կամ 35 կամ 36
	32	Ֆինանսական միջնորդություն, անշարժ գույք, վարձակալություն	
	33	Տեղեկատվական տեխնոլոգիաներ	
	35	Այլ ծառայություններ	
	36	Պետական կառավարում	
	37	Կրթություն	
Միջուկային	11	Միջուկային վառելիք	11
Առողջապահություն	38	Առողջապահություն, սոցիալական սպասարկում	38

4.3.2.4 Գնահատման ընթացքը, ինչպես նաև անհամապատասխանությունների հայտնաբերումն ու դասակարգումը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.3.3 ***Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը***

Հավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման սերտիֆիկատի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՍՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից սերտիֆիկացման հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՍՄ-ն հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու համար:

4.4 Գնահատումները և վերահավատարմագրումը

4.4.1 Պարբերական գնահատումը

4.4.1.1 Պարբերական գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում՝ հաշվի առնելով ներքոհիշյալ պահանջները:

4.4.1.2 Նախքան պլանավորված պարբերական գնահատումը ՍՄ-ն առնվազն 10 աշխատանքային օր առաջ պետք է էլեկտրոնային փոստով ԱՐՄՆԱԲ-ին ուղարկի հետևյալ փաստաթղթերը՝

- տեղեկատվություն հավատարմագրման ոլորտի շրջանակներում տրված համապատասխանության սերտիֆիկատների վերաբերյալ՝ հաշված նախորդ գնահատումից՝ համաձայն Հավելված Բ-ի,

- փոփոխված փաստաթղթերի ցանկը և փաստաթղթերը (թղթային և/կամ էլեկտրոնային)՝ համաձայն Հավելված Գ ձևաչափի:

4.4.1.3 Պարբերական գնահատման ծրագիրը կազմելիս գնահատման խմբի ղեկավարը իրականցնում է ռիսկերի վերլուծություն՝ հաշվի առնելով նախորդ գնահատումների արդյունքները այնպես, որ հավատարմագրման ցիկլի ընթացքում գնահատվեն ՍՄ-ի գործունեության բոլոր ոլորտները՝ ըստ կառավարման համակարգի տեսակի:

4.4.1.4 Պարբերական գնահատումները պլանավորելիս ներկայացուցչական նմուշն ընտրվում է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

1) ՍՄ-ի ընդհանուր կատարողականը.

2) այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործընթացի բարդությունը կամ օրենսդրությունը և այլն, որոնք ազդում են սերտիֆիկացված կազմակերպության՝ ԿՀ-ի նախատեսված արդյունքները բավարարելու իր կարողությունը դրսևորելու ունակության վրա.

3) շահագրգիռ կողմերի հետադարձ արձագանքը, ներառյալ՝ սերտիֆիկացված կազմակերպությունների վերաբերյալ բողոքները.

4) ՍՄ-ի ներքին աուդիտների արդյունքները.

5) սխեմայի սեփականատերերին ներկայացվող պահանջները.

6) ՍՄ-ի աշխատանքային գրաֆիկների փոփոխությունները՝ որոշակի տարածաշրջանում կամ տեխնիկական բնագավառում աշխատանքային ծավալի աճը.

7) ՍՄ-ի հավատարմագրման ոլորտում պատվիրատուների քանակը.

8) ՍՄ-ի աուդիտորների կողմից համապատասխանության գնահատման գործընթացի նկատմամբ վստահությունը,

9) նախորդ գնահատման արդյունքները.

10) տրված սերտիֆիկատների քանակը.

11) աուդիտորների թիվը.

12) տարբեր աուդիտորների առկայությունը.

13) արդյոք աուդիտորները ներքին անձնակազմից են, թե արտաքին ռեսուրսներից.

14) տարբեր աուդիտներ՝ նախնական աուդիտ (1-ին փուլ/2-րդ փուլ), հսկողություն և վերասերտիֆիկացում.

15) ինտեգրված աուդիտները, բազմաբնույթ աուդիտները.

16) այն երկրները, որտեղ սերտիֆիկացման նպատակով աուդիտներ են անցկացվում.

17) գործունեությանը հետևելու նախորդ գործողությունների արդյունքը.

18) բողոքները, հաճախորդների հարցումները.

19) շահագրգիռ կողմերի և կանոնակարգողների պահանջները.

20) արդեն գնահատված տեխնիկական համախմբերը.

21) ՍՄ-ի հավատարմագրման այլ տեսակների փորձը.

22) ՍՄ-ի՝ իր գործունեությունը կառավարելու կարողության նախորդ պատմությունը.

23) ՍՄ-ի կողմից իր առանցքային գործողությունների նկատմամբ իրականացվող հսկողության մակարդակը.

24) սերտիֆիկացման սխեմաների հատուկ պահանջները, և

25) պատվիրատուների հետ կնքված միջազգային համաձայնագրերը:

Ծանոթություն** 1. **Հավատարմագրման ցիկլում գնահատումները պլանավորելիս ընտրվում են այն անձինք, ովքեր նախորդ գնահատումների ընթացքում չեն գնահատվել գործունեությանը հետևելու տեխնիկայով:

Ծանոթություն** 2. **Եթե ՍՄ-ն իր գործունեությունն իրականացնում է տարբեր հասցեներում (մասնաճյուղերում), ապա պարբերական գնահատումներն իրականացվում են գլխավոր գրասենյակում և բոլոր մասնաճյուղերում: Մասնաճյուղերը ընտրվում են այնպես, որ ամբողջ հավատարմագրման ցիկլում գնահատվեն բոլորը:

4.4.1.5 ***Արտահերթ գնահատումները***

Արտահերթ գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

4.4.1.6 ***Համապատասխան որոշման կայացումը***

Պարբերական/արտահերթ գնահատման արդյունքների հիման վրա ՀԿ-ն ընդունում է հավատարմագրումը պահպանելու, կրճատելու, ընդլայնելու, վերականգնելու, կասեցնելու, դադարեցնելու վերաբերյալ որոշում:

4.4.1.7 ***Հավատարմագրման չափանիշների փոփոխությունը՝ այդ թվում հավատարմագրման/սերտիֆիկացման նոր ստանդարտին անցումը***

Եթե հավատարմագրման/սերտիֆիկացման ստանդարտը արդիականացվում կամ փոփոխվում է, ապա ՍՄ-ն պարտավոր է ցույցադրել, որ ունի համապատասխան ընթացակարգ և իրազեկություն նոր/փոփոխված ստանդարտով սահմանված գործունեությունն իրականացնելու համար:

Հավատարմագրման չափանիշների փոփոխության հետևանքով գնահատման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

*4.5 **Վերահավատարմագրումը (հետագա հավատարմագրումը)***

4.5.1 Վերահավատարմագրման ընթացակարգը սահմանված է PR-7-ում:

*4.5.**2 Վերահատարմագրման վերաբերյալ որոշման կայացումը***

Վերահավատարմագրման վերաբերյալ որոշման կայացման և հավատարմագրման սերտիֆիկատի ու ոլորտի տրամադրման գործընթացը սահմանված է PR-7 ընթացակարգում:

Եթե գնահատման ժամանակահատվածում հնարավոր չէ կազմակերպել ՍՄ-ի գործունեության հետևում (հայտատուի կողմից սերտիֆիկացման հայտ(եր)ի բացակայության դեպքում), ՍՄ-ն հավատարմագրվում է այն պայմանով, որ առաջին հայտը ստանալու դեպքում պետք է այդ մասին տեղեկացնի ԱՐՄՆԱԲ-ին՝ գործունեության հետևումն իրականացնելու համար:

*4.6 **Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը, արդիականցումը, կրճատումը, հավատարմագրման կասեցումը և դադարեցումը***

*4.6.1 **Հավատարմագրման ոլորտի ընդլայնումը***

4.6.1.1 ՍՄ-ն հավատարմագրման ոլորտի ընդլայնման նպատակով ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում հավատարմագրման ընդլայնման հայտը և կից փաստաթղթերը, որոնց ձևաչափերը տեղադրված են ԱՐՄՆԱԲ-ի կայքում: Անհրաժեշտ տվյալների ու փաստաթղթերի բացակայության կամ թերի լինելու դեպքում ԱՐՄՆԱԲ-ը կարող է պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

4.6.1.2 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացի պլանավորումը և գնահատումը կատարվում է այնպես, ինչպես հավատարմագրման գործընթացը՝ համաձայն PR-7-ի և PR-7.10-7.11-ի:

4.6.1.3 ՍՄ-ն իրավունք ունի վկայակոչել իր հավատարմագրված լինելը միայն ընդլայնված ոլորտը հավատարմագրելուց հետո:

4.6.1.4 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման գործընթացը կարող է համատեղվել ՍՄ-ի պարբերական գնահատման հետ: Այս դեպքում ՍՄ-ն հայտը ներկայացնում է նշված գնահատումից առնվազն 2 ամիս առաջ:

4.6.1.5 Հավատարմագրման ոլորտի ընդլայնման վավերականության ժամկետ է սահմանվում ՍՄ-ի հավատարմագրման ժամկետի ավարտը:

4.6.1.6 Հավատարմագրման կասեցման ժամանակահատվածում կամ հավատարմագրման պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու դեպքում ՍՄ-ն չի կարող ներկայացնել հավատարմագրման ընդլայնման, ինչպես նաև վերահավատարմագրման հայտ:

4.6.1.7 Հավատարմագրման ընդլայնման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է հավատարմագրման ոլորտի ընդլայնված մասը կամ փոփոխված հավատարմագրման ոլորտի հավելվածը, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

4.6.2 ***Հավատարմագրման ոլորտի արդիականացումը***

4.6.2.1 ՍՄ-ն հավատարմագրման ոլորտի արդիականացման համար ԱՐՄՆԱԲ-ին է ներկայացնում արդիականացման ենթակա հավատարմագրման ոլորտը և կից փաստաթղթերը: Արդիականացման գործընթացի ժամանակ տեղում գնահատում չի իրականացվում: Արդիականացման գործընթացը սահմանված է PR-03 և PR-7 ընթացակարգերում:

4.6.3 ***Հավատարմագրման ոլորտի կրճատումը***

4.6.3.1 Հավատարմագրման կրճատումը կատարվում է համաձայն PR-7.10-7.11 և PR-7 ընթացակարգերի՝

- ՀԳՄ-ի դիմումի համաձայն,
- հավատարմագրման կասեցման հիմքերը սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում,

- պարբերական/արտահերթ գնահատման, գործունեությանը հետևելու արդյունքում,

- այն դեպքում, եթե հավատարմագրվելուց/հավատարմագրումը ընդլայնելուց հետո 12 ամսվա ընթացքում ՀԳՄ-ի կողմից գործունեության հետևման (witnessing) դիմում/գրություն չի ներկայացվել, ինչի արդյունքում ԱՐՄՆԱԲ-ի կողմից տվյալ սխեմայով/արտադրանքով գործունեության հետևում չի իրականացվել, բացառությամբ այն դեպքերի, երբ ՍՄ-ն այդ ժամանակահատվածում հայտեր չի ստացել:

4.6.3.2 Հավատարմագրման կրճատման դեպքում իրականացվում է հավատարմագրման վկայագրի վերաձևակերպում: Հավատարմագրման վկայագրին կցվում է հավատարմագրման ոլորտի կրժատված մասը կամ փոփոխված հավատարմագրման ոլորտի հավելվածը, ինչի մասին համապատասխան նշում է կատարվում հավատարմագրված ՀԳՄ-ների ռեեստրում և գրանցամատյանում՝ համաձայն Ա հավելվածի:

4.7 ***Հավատարմագրման կասեցումը, դադարեցումը***

4.7.1 Հավատարմագրման կասեցման և դադարեցման հիմքերը ու ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

4.7.2 Եթե ՀԳՄ-ի հավատարմագրումը դադարեցվում է արտահերթ/պարբերական գնահատման, գործունեության հետևման արդյունքում կամ ՀԳՄ-ի դիմումի համաձայն, ապա վերջինների կողմից տրված համապատասխանության սերտիֆիկատները գործում են մինչև դրանց ժամկետի ավարտը կամ մինչև առաջին համապատասխանության հսկողությունը (եթե կիրառելի է), իսկ համապատասխանության գնահատման գործընթացի խախտումներով համապատասխանության սերտիֆիկատները դադարեցվում են:

Նման դեպքերում ՍՄ-ն կարող է հետագա սերտիֆիկացման/հսկողության գործընթացը փոխանցել միևնույն սերտիֆիկացման ոլորտով հավատարմագրված մեկ այլ ՍՄ-ին (համաձայն IAF MD 2-ի)՝ փոխանցելով համապատասխանության

սերտիֆիկատը և սերտիֆիկացված կազմակերպության վերաբերյալ բոլոր փաստաթղթերը:

Եթե փոխանցվող սերտիֆիկատի վրա նախատեսվում է պահպանել մեկ այլ ՍՄ-ի կողմից իրականացված առաջին սերտիֆիկացման ամսաթիվը, ապա պետք է հստակեցվի, որ դա ընթացիկ ՍՄ-ի կողմից չէ թողարկվել (օրինակ՝ «լրացուցիչ տեղեկատվություն» դաշտում նշել սերտիֆիկատն ընդունող ՍՄ-ի անվանումը): Այդ նշումը պահպանվում է մինչև սերտիֆիկատի առնվազն առաջին վերաթողարկումը:

Այն դեպքում, երբ սերտիֆիկատի փոխանցումից հետո իրականացվում է տեղում աուդիտ (հսկողություն կամ վերասերտիֆիկացում), որի արդյունքում սերտիֆիկացման ոլորտում կատարվում են փոփոխություններ, ապա այդ ՍՄ-ն պետք է վերաթողարկի սերտիֆիկատը՝ նշելով իր անվանումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հավատարմագրված ՍՄ-ի կողմից տրամադրված համապատասխանության սերտիֆիկատի վրա զետեղվում է հավատարմագրման նշանը (կամ հավատարմագրման տեքստային վկայակոչում), չհավատարմագրված ոլորտները չեն կարող ներառվել մեկ համապատասխանության սերտիֆիկատի մեջ: Այդ դեպքում տրամադրվում է 2 սերտիֆիկատ: Հավատարմագրված ՍՄ-ն, որը հավատարմագրված է կառավարման համակարգերի սերտիֆիկացման որոշակի ոլորտի համար, նույնիսկ կասեցված լինելու դեպքում պարտավորվում է չտրամադրել սերտիֆիկատներ:

*4.8 **Հավատարմագրման վերականգնումը***

4.8.1 Հավատարմագրման կասեցումից հետո հավատարմագրումը վերականգնվում է արտահերթ կամ պարբերական գնահատման միջոցով՝ իրականացնելով հետևյալ գործընթացներից մեկը կամ մի քանիսը.

- փաստաթղթերի փորձաքննություն,
- տեղում գնահատում,
- գործունեության հետևում:

4.8.2 Հավատարմագրման վերականգման ընթացակարգը սահմանված է PR-7 ընթացակարգում:

*4.9 **Բողոքարկումը և գանգատները***

4.9.1 Բողոքարկման քննարկման ընթացակարգը սահմանված է/սահմանված է K-04 կարգում, իսկ գանգատներինը՝ PR-7.12 ընթացակարգում, որոնք տեղադրված են www.armnab.am կայքում:

5. ՍՄ-ի և ԱՐՄՆԱԲ-ի պարտավորությունները

5.1 Պարտավորությունները սահմանված են ՍՄ-ի և ԱՐՄՆԱԲ-ի միջև կնքվող Մինչհավատարմագրման, Հավատարմագրման պայմանագրերում, ինչպես նաև սույն փաստաթղթի 5-րդ բաժնում:

5.2 ՍՄ-ն պետք է ապահովի, որ ԱՐՄՆԱԲ-ի կողմից գործունեությանը հետևելու պահանջը ներառվի իրենց և հայտատուների միջև կնքված պայմանագրերում, որպեսզի հայտատուները չխոչընդոտեն ԱՐՄՆԱԲ-ի մուտքը իրենց գործունեության իրականացման վայր, այլապես նրանց չընդունելը կարող է հանգեցնել հավատարմագրված սերտիֆիկացման գործողության դադարեցման:

5.3 ԱՐՄՆԱԲ-ի և հավատարմագրված կամ հավատարմագրմանը հավակնող կամ ՍՄ-ի, կամ ՍՄ-ի և հայտատուի միջև հարաբերություններին վերաբերող ողջ տեղեկատվությունը պետք է լինի գաղտնի, ուստի ուստի ԱՐՄՆԱԲ-ը ՍՄ-ի վերաբերյալ տեղեկատվություն է տրամադրում երրորդ կողմին, եթե՝

- տեղեկատվության հրապարակումը նախատեսված է հավատարմագրման կամ սերտիֆիկացման ստանդարտներով/կանոններով,
- սահմանված է օրենքով կամ լիազոր մարմինների կողմից,
- հարցումը իր հիմնավորմամբ ԱՐՄՆԱԲ-ին է ուղարկվում ԵԱՏՄ, EA, IAF հավատարմագրման կազմակերպություններին ստորագրող կողմ հանդիսացող մեկ այլ հավատարմագրման մարմնի կողմից,
- տեղեկատվության տրամադրումն իրականացվում է բոլոր ներգրավված կողմերի բացահայտ և միաձայն համաձայնությամբ: